«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵԼԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Բարոյական արժեքներ

Առարկան՝ Հասարակագիտություն

Հետազոտող ուսուցիչ՝ Ասատրյան Ռուզան

Ուսումնական հաստատություն՝ Նոր Խարբերդի Մն. Ղազարյանի անվան N2 միջնակարգ դպրոց

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն……1

Գլուխ 1 . Արժեք հասկացությունը……3

Արժեքների տարբերակումը……...4

Բարոյական արժեքներ……7

Գործնական
աշխատանք……10

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ……11

Օգտագործվող գրականության ցանկ……..12

Ներածություն

Մարդկային հասարակության ստեղծած բարոյական արժեքները բնութագրում են հասարակության զարգացման մակարդակը և փոխանցվում սերնդեսերունդ: Ուսումնառության ողջ գործընթացում աշակերտները ձեռք են բերում ոչ միայն բազմապիսի գիտելիքներ, կարողություններ,այլ նաև բարոյական և համամարդկային արժեքներ: Սովորողների զարգացման գործընթացում հոգեբանական խորքային փոփոխությունները վկայում են նշված տարիքային փուլում նրանց ընկալումը բարոյակն արժեքների հանդեպ:Հարափոփոխ այս դարաշրջանում շատ կարևորեցի այս թեմային անդրադառնալը,քանի որ օրեցօր փոխվում է հասարակության ՝ բարոյական արժեքների ընկալումը:

- Հանրակրթական դպրոցում մանկավարժի խնդիրը ոչ միայն դպրոցականների կողմից որոշակի գիտելիքների ապահովումն է, այլ նրանց մեջ անձնային որոշակի որակների, որոնք կհամապատասխանեն տվյալ հասարակության պահանջներին և բարոյականության նորմերին:

Առանձին ուշադրություն է դարձվում հատկապես «Հասարակագիտություն» առարկայի դասագրքերին, քանի որ սովորողների արժեքային համակարգի ձևավորման գործում մեծ դեր ունեն «Հասարակագիտության» դասագրքերում ներառված դասանյութերի բովանդակությունը, արծածված հարցերն ու առաջադրանքները:

Թեմայի արդիականությունը կայանում է նրանում, որ ժամանակակից հասարակությունն ընթանում է կրթության արդիականացման ճանապարհով, որն ուղեկցվում է արժեքների վերագնահատմամբ և արժեքների վերաիմաստավորմամբ: Հասարակույան անվտանգության ապահովման համար գերխնդիր է պետական մտածելակերպ ունեցող, ապագայի մարտահրավերներին դիմակայելու պատրաստ համամարդկային և ազգային արժեհամակարգով անհատի ձևավորումը:Այդ իսկ պատճառով մենք հնարավորինս ամեն ինչ անում ենք բարձացնելու անհատի արժեհամակարգի գիտակցումը:Ազգային դիմագծի մեջ չկորցնելու հիմնական երաշխիքներից մեկը բարոյական արժեքների գնահատումն ու պահպանումն է:Մեր նպատակն է երեխաների մեջ սերմանել բարոյական այնպիսի արժեքներ,որոնց միջով կունենանք առողջ հասարակություն: համամարդկային և ազգային արժեհամակարգով անհատի ձևավորումը:

Ազգային արժեքների պահպանումն այսօր, երբ տարբեր ժողովուրդներ ու ազգեր ձուլվում անհետանում են, հիմնախնդիր է. Վտանգված է սովորողների ազգային արժեհամակարգի ձևավորումն ու զարգացումը: Այսօր կրթական համակարգի գերխնդիրն է <<Հասարակագիտություն>> դասագրքի միջոցով ապահովել ՀՀ քաղաքացու անձի արժեքային բարոյական դաստիարակությունը:

Հետազոտության նպատակը՝ գտնել այնպիսի մեխանիզմներ,որոնց միջոցով երեխաները ավելի խորը կուսումնասիրեն բարոյական արժեքները,կհասկանան դրանց լրջությունը:Ավելի մտաչելի կազմակերպել կրթական պրոցեսը,կիրառվեն բազաֆուկցիոնալ մեթոդներ:

Հետազոտության խնդիրները՝ Առաջադրել դպրոցականի արժեհամակարգի ձևավորման մեխանիզմ, ներկայացնել դպրոցականի արժեհամակարգի ձևավորման հիմնախնդիրը հանրակրթական դպրոցում:

Մեր հետազոտության համար մեթոդաբանական հիմք են հանդիսացել՝ Լ. Ի. Բոժովիչի, Ա.Գ. Զդրավոմիսլովայի, Ա.Ն. Լեոնտևի, Ս.Լ. Ռուբինշտեյնի,Սուխամլինսկի <<Ինչպես դաստիարակել իսկական մարդ>> մշակված արժեքային կողմնորոշման վերաբերյալ դիտարկումները:

Հետազոտության կիրառական նշանակությունը՝

Մեր կատարած հետազոտական ուսումնասիրության արդյունքների հիման վրա հանրակրթական դպրոցում ամրապնդել բարոյական արժեքների ըմբռնումը ,կարևորել երեխաների բարոյական արժեքների պահպանումը:Որը կօգնի երեխաներին զերծ մնալ կոնֆլիկտներից և կերտել բարոյական բարձր արժեքներով օժտված անհատ:

Գլուխ 1 . Արժեք հասկացությունը

Արժեքը, աշխարհի յուրահատուկ ընկալումն է, որը ձևավորվում է ոչ միայն ձեռք բերված գիտելիքի և ինֆորմացիայի, այլև սեփական կենսափորձի հիման վրա։Մշակույթը խիստ կապված է մարդու արժեհամակարգի հետ։ Նեղ իմաստով՝ արժեքը մարդու համար իրի, առարկայի կամ երևույթի դրական նշանակությունն է։ Արժեքը մարդու վերաբերմունքն արտահայտող ցուցանիշ է, որի կարևոր կատեգորիաներից են ՝ հավատն ու սերը։

Հավատը ծնում է հույս և մղում մարդուն ապրելու, ստեղծելու, արարելու։ Հավատը դառնում է կողմնորոշիչ մարդու կյանքի և գործունեության համար։ Մարդիկ քանի դեռ ապրում են՝ հավատում են, քանի դեռ հավատում են՝ ապրում են։

Սերը մյուս մարդկանց հետ միավորվելու ձգտումն է։ Սիրո մեջ միավորվում են մարդու արժեքային պատկերացումները։ Այն բաղկացած է մի քանի մակարդակներից։ Այլասիրությունը ուրիշին սիրելու, իսկ եսասիրությունը սեփական անձը սիրելու երևույթն է։

Նաև կան սիրո առանձնացված դրսևորումներ։Օրինակ սերը անհավասարների միջև, երբ միայն տալիս ես՝ առանց վերադարձի ակնկալիքի։ Սիրո այդ ձևն անվանում են մայրական։Հաջորդը սերն է հավասարների միջև, երբ ինչքան տալիս, նույնքան ստանում ես։ Օրինակ՝ եղբայրական սերը։Սերն անհատական ընտրողական զգացում է, որը դրսևորվում է խորը և կայուն ապրումներում։ Ըստ Հեգելի՝ սիրո ճշմարիտ էությունն այն է, որ հրաժարվես ինքդ քեզ գիտակցելուց, մոռանաս քեզ ուրիշի <<Ես>>-ի մեջ և այնուամենայնիվ , այդ կորսվածության ու մոռացվածության մեջ առաջին անգամ գտնես և տիրապետես քեզ։Սերն ապրում է, որն ըստ Հեգելի չի հենվում խորհրդածությունների և դատողականության վրա, այլ բխում է զգացմունքից։ Սերը խիստ անհատական և անկրկնելի ապրում է։Ամեն մեկը յուրովի է սիրում։ Սիրո մեջ մարդն ավելի պահանջկոտ է դառնում ինքն իր նկատմամբ, ձգտում ինքնակատարելագործման։Ահա թե ինչու սերը մշակութային և գեղեցիկ երևույթ է։Հաճախ արժեք է համարվում ճշմարտությունը, հատկապես բարու և գեղեցիկի հետ կապվելիս։ Բարու, գեղեցիկի, արդարի միասնության սկզբունքը գալիս է Սոկրատեսից,ով փիլիսոփայական գիտելիքը բաժանում է տեսականի(որի կրողը նա համարում է ճշմարիտը),գործնականի (բարին),գեղարվեստականի (գեղեցիկը)։Ճշմարտությունը միայն որոշակի սոցիալ-մշակութային պայմաններում է ձեռք բերում արժեքային նշանակություն, իսկ գոյաբանական և իմացաբանական իմաստներով ըմբռնված ճշմարտությունը արժեքաբանորեն չեզոք են։

Կյանքում հաճախ ճշմարտությունը զոհաբերվում է արժեքներին: Եթե Արիստոտելն առաջնորդվում էր <<թեև Պլատոնը բարեկամս է, բայց ճշմարտությունը թանկ է>> սկզբունքով, ապա շատերն առաջնորդվում են << թեև ճշմարտությունը թանկ է, բայց Պլատոնը բարեկամս է>> սկզբունքով:

Արժեքների տարբերակումը

Արժեքները բավարարում են սուբյեկտի կենսական պահանջմունքները և իմաստավորում են կյանքը: Սուբյեկտի արժեքները միավորվելով կազմում են մի ամբողջական համակարգ: Անձի մասին կարելի է դատել նրան առավել բնորոշ արժեքներով, որոնք գոյացնում են անձի ներաշխարհը: Իսկ ինչ վերաբերում է ազգային արժեքներին, դրանք բախտորոշ նշանակություն ունեն և ձևավորվում են պատմական զարգացման ընթացքում, կազմում ներկա կեցության հիմքը և բնականոն գոյության ու անխափան զարգացման երաշխիքը: Ազգին հատուկ արժեքներն արտացոլվում են նրա ինքնագիտակցությանը տարբեր ձևերում՝ արվեստի, փիլիսոփայության, բարոյականության, կրոնական պատկերացումների բանահյուսության մեջ: Ազգի արժեհամակարգը պետք է յուրացնի յուրաքանչյուր անհատ հանրության մեջ բնականոն գործելու համար: Այսպիսով անհրաժեշտ է տարբերակել արժեք-միջոց և արժեք-նպատակ հասկացողությունները: Օրինակ <<իշխանությունը>>, մի բան է որպես միջոց, մեկ այլ բան որպես՝ նպատակ, նմանապես փողը և փառքը: Երբ իշխանությունը, փողն ու փառքը դառնում են անձի գերագույն արժեք, դա հիվանդագին և ախտածին երևույթ է, մինչդեռ որպես միջոց դրանք համարվում են կյանքի ընդունելի ու անհրաժեշտ տարրեր:

Առանձնացնենք նաև արժեք-արժանիքները, որոնք անձի համար ոչ միայն կենսականորեն անհրաժեշտ բարիք են, այլ նաև ցանկալի հատկություն: Արժեք-արժանիքների ըմբռնումը կարևոր է <<անհատ-ազգ>> փոխհարաբերությունների կարգավորման առումով: Բոլոր անձնային հատկությունները հանդիսանում են տվյալ անձի արժանիքները, մասնավորապես <<հաստատակամություն>>, <<աշխատասիրություն>>, <<համբերատարություն>> և այլն: Պետք է տարբերակել ազգային արժանիքներ հասկացողությունը, որում առանձնանում է ազգային-պետական միաբանության ապահովումը: Միաբանության ապահովման մեջ վճռորոշ դեր են խաղում երեք հիմնական արժեք-արժանիքներ՝ արժանապատվություն, արդարամտություն, աշխատասիրություն:

Արժանապատվությունը սեփական <<Ես>>-ի արժեքի գիտակցումն է: Դա անձի վարքի, արարքների, իրավունքների գնահատականն է, անձի ինքնագնահատականը:

Ազգային արժանապատվությունը սեփական ազգի արժանիքների, վաստակի, իրավունքների գիտակցումն է, ինքնահարգանքը՝ որպես ազգի ներկայացուցիչ։

Արդարամտությունը այլոց ճշմարիտ, արդարացի գնահատումն է։ Եթե արժանապատվությունը անձի հարգանքն է իր հանդեպ, ապա արդարադատությունը հարգանքն է ուրիշների հանդեպ։ Այսպիսով արդարամտությունը ոչ միայն անդրադառնում է մեր սեփական ինքնագնահատականի վրա, այլ նաև ազդում է դրա վրա։

Աշխատասիրությունը աշխատանքի հանդեպ անձի դրական վերաբերմունքն է։ Այն բացառիկ կարևորություն ունի և առաջընթացի գլխավոր նախադրյալն է։ Վերը նշված արժեք-արժանիքները խիստ փոխկապակցված են և դրանցից յուրաքանչյուրի բացակայությունը հանգեցնում է որևէ էական խնդրի առաջացման։

Այսպիսով պետք է հաշվի առնել, որ մշակույթն ու արժեքը չեն նույնանում, բայց և այնպես մշակույթում ստեղծված լավագույն հատկանիշը արժեքն է։ Այն անհատներն ու ազգերը, ոոնք ապրում են արժեքների գերակայությամբ բարձր ոգեղեն հատկանիշներով ապրող ազգեր և անհատներ են, իսկ երբ նվազում են արժեքները վրա է հասնում ոգու սովը։Ոգեղենությունը պեք է հատուկ լինի բոլորին, հատկապես՝ մտավորականությանը, որը համարվում է ազգի ինտելեկտուալ խիղճը։Որո՞նք են հիմնական բարոյական արժեքները։ Ինչպե՞ս կարելի է որոշել՝ ինչն է ճիշտ, լավ ու բարի։«Բարոյական արժեք» ասելով՝ հասկանում ենք այն վեհ գաղափարները, պատվիրանները, ուսուցումները, որոնք ապահովում են մարդու բարոյական, առաքինի կյանքն ու նկարագիրը։ Այդպիսի բարձրագույն արժեքներ են հոգևոր-բարոյական արժեքները՝ տրված Աստծո կողմից, հաստատված Քրիստոսի պատվիրաններով, ուսուցումներով։Այլ կրոններ կամ պետական համակարգեր ևս ունեն բարոյական արժեքների մղող օրենքներ ու պատվերներ, սակայն քրիստոնեության բարոյական արժեքներն անհամեմատ վեր են մնացյալ բոլորից։ Բացի այդ, բարոյականության, առաքինության օրենքներ կարելի է շատ հաստատել, սակայն դրանց ամբողջական կատարման, ոչ միայն գործողության օրինակելիության, այլև մտքի ու սրտի մաքրությամբ իրագործելու համար մարդկային ներուժը բավարար չէ։

Քրիստոնեությունը խոսում է աստվածային շնորհի մասին, որով մարդն իր կամքով, գործակից լինելով աստվածային նախախնամությանն ու զորակցությանը, կարողանում է ապրել բարոյական ու առաքինի կերպով, իսկ սայթաքելու դեպքում էլ մաքրվել ու սրբվել կատարված մեղանչումներից։ Մինչդեռ միայն օրենքի հաստատումը այս շնորհն ու զորությունը չի տալիս մարդուն։

Սովորական օրենքների հետ համեմատությամբ՝ տասնաբանյա պատվիրանների առավելությունը երևում է հատկապես վերջին պատվիրանով, որը հրահանգում է չցանկանալ ուրիշի ունեցվածքը, կնոջը, ծառայողներին (Ելք 20.17): Պողոս առաքյալը, խոսելով այս պատվիրանի մասին, նշում է, որ ցանկության մեղավոր բնույթը ճանաչելի չէր լինի, եթե օրենքն ասած չլիներ՝ մի՛ ցանկացիր (Հռ. 7.7):

Քրիստոնեությունը բարոյականության համար անհրաժեշտ արտաքին դրսևորումները փոխադրեց ներքին արտահայտման մեջ՝ մեղքը դիտարկելով մարդու հոգևոր ներաշխարհում: Դրա համար է, որ Քրիստոս բարկությունը կարծես համարժեք համարեց մարդասպանությանը, իսկ կնոջը ցանկությամբ նայելը՝ շնությանը (Մատթ. 5.21-22, 27-28):

Սուրբ Ներսես Շնորհալին «Հավատով խոստովանիմ» խորագրով իր քսանչորս աղոթքներից մեկում խնդրում է, որ Աստված իրեն զորություն տա, որպեսզի աչքերը չնայեն արատավոր բաների, և ականջները չլսեն մեղսալի, անպարկեշտ, չար խոսքեր: Քրիստոնեությունն անգամ լսելու և տեսնելու մեջ է դնում բարոյական սկզբունքներ՝ ի տարբերություն այլ օրենքների, որոնք ուշադրություն են դարձնում միայն արտաքին արարքներին, արտաքին գործողություններին:

Այսօր ոչ միայն մարդկանց հետ հաղորդակցության մեջ, այլև հաճախ համացանցից օգտվելիս, հեռուստացույց դիտելիս կանգնում ենք այն անցանկալի իրողության առջև, որը շեշտել էր Ներսես Շնորհալին՝ անպարկեշտ, մեղսալի բաներ տեսնելու կամ լսելու վտանգը: Պետք է զգոն լինել. առօրյայի, ներկա տեղեկատվության ու զվարճանքների հորձանուտում գայթակղություններ, մեղսալի տեսարաններ են աչքի զարնվում, բայց այլ է դրանց հանկարծակի աչքի ընկնելը, և այլ է, երբ մարդը հավանություն է տալիս այդ պատկերներին ու տեսարաններին՝ դրանք մեղավոր հաճույքով դիտելով, ընդունելով և դրանով իսկ ընկնելով մեղքի մեջ:Պե՞տք է արդյոք ծնողներն առաջին հերթին հատկապես բարոյական բարձր արժեքներ սերմանեն իրենց երեխաների մեջ:«Հոգին է կենդանարար» (Հովհ. 6.64): Հոգին է, որ մարմնին կենդանություն է տալիս: Եվ ինչպես, Եղիշե պատմիչի խոսքերով, հոգին առավել է, քան մարմինը, այդպես էլ պետք է առավել ջանադրություն ցուցաբերել հոգևորի համար: Այդ պատճառով Հայ Առաքելական Եկեղեցին ճիշտ է համարում մանկամկրտությունը, երեխաների հոգևորի համար ծնողների հոգալը դեռևս վաղ հասակից:

Կրոնական տեսակետից մեղքի հակառակը բարոյականությունը չէ, այլ հավատը, և ծնողներն առաջին հերթին չպետք է փորձեն բարոյական բարձր ուսուցումներ տալ երեխաներին, որոնք մանուկներին անհասկանալի կարող են թվալ, այլ զորացնել նրանց հավատքը:

Սրա ակնարկը տեսնում ենք Պողոս առաքյալի խոսքի մեջ. «Իբրև մանուկներ ի Քրիստոս կաթ տվեցի ձեզ և ոչ՝ կերակուր, քանի որ դեռ կարող էլ չէիք» (Ա Կորնթ. 3.2):

Եթե կրոնը լիներ միայն բարոյական պահանջներ ներկայացնող, ապա այդ դեպքում քրիստոնեությունը կվերածվեր սովորական բարոյագիտության կամ բարոյական, էթիկական ուսուցումների համակարգի: Մինչդեռ հավատքի զորացումը բերում է Աստծո վեհ, առաքինի, բարոյական պատվիրանների համաձայն ապրելու վճռականությունը, ինչպես նաև շնորհը և ուժը՝ այդ պատվիրաններով ապրելու համար:

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ

Բարոյական արժեքներ ունեցող մարդիկ հստակ հասկանում են՝ ինչն է ճիշտ, ինչը՝ սխալ: Նրանց վարվելակերպը պայմանավորված չէ պահի թելադրանքով, այլ հիմնված է հստակ սկզբունքների վրա, որոնք նրանց համար հանդիսանում են հուսալի ուղեցույց, և որոնց համաձայն նրանք վարվում են, անգամ երբ իրենց ոչ ոք չի տեսնում:

ԻՆՉՈՒ ԵՆ ԿԱՐԵՎՈՐ

Երեխաները աջից ու ձախից անընդհատ «ռմբակոծվում են» ճշտի ու սխալի վերաբերյալ աղավաղված տեսակետներով, լինի դա իրենց դասընկերների շրջապատում, իրենց լսած երաժշտության, դիտած ֆիլմերի կամ հեռուստահաղորդումների միջոցով: Այդ ամենի ազդեցության ներքո նրանք գուցե սկսեն հարցականի տակ դնել ճշտի ու սխալի վերաբերյալ իրենց ունեցած համոզմունքները:Սա հատկապես լուրջ խնդիր է դեռահասության տարիքում: Երեխաների դաստիարակության վերաբերյալ մի գրքում ասվում է, որ մինչև այդ տարիքը երեխաները արդեն «պետք է հստակ հասկանան, որ հասակակիցները և զանգվածային տեղեկատվական միջոցները մեծ ճնշում են բանեցնում՝ ստիպելով հետևել որոշակի տենդենցների՝ ընդունված ու ճանաչված լինելու համար: Նրանք նաև պետք է կարողանան որոշումներ կայացնել իրենց սեփական արժեքների ու նախասիրությունների հիման վրա, անգամ եթե դրա համար հարկ լինի իրենց ընկերների կարծիքին դեմ գնալ» (Beyond the Big Talk): Ուրեմն հստակ է, որ երեխաների բարոյական դաստիարակությունը անհրաժեշտ է սկսել *նախքան* դեռահասության շրջանը: Անձի բարոյական գիտակցությունը

Բարոյական գիտակցությունը որպես մարդու կողմից իր վարքի նորմերի գիտակցումը՝ էթիկական պահանջների հասարակական իմաստի ըմբռնման և ընդունման հիման վրա: Բարոյական գիտակցության բաղադրիչները: Բարոյական մտապատկերներ և հասկացություններ, բարոյական հայացքներ, զգացմունքներ, համոզմունքներ, բարոյական իդեալներ, բարոյական արժեքային կողմնորոշումներ, բարոյական ռեֆլեքսիա:

«Բարոյական արժեք» ասելով՝ հասկանում ենք այն վեհ գաղափարները, պատվիրանները, ուսուցումները, որոնք ապահովում են մարդու բարոյական, առաքինի կյանքն ու նկարագիրը: Այդպիսի բարձրագույն արժեքներ են հոգևոր-բարոյական արժեքները՝ տրված Աստծո կողմից, հաստատված Քրիստոսի պատվիրաններով, ուսուցումներով: Այլ կրոններ կամ պետական համակարգեր ևս ունեն բարոյական արժեքների մղող օրենքներ ու պատվերներ, սակայն քրիստոնեության բարոյական արժեքներն անհամեմատ վեր են մնացյալ բոլորից: Առօրյա իրականության մեջ հաճախ ենք առերեսվում բարոյական արժեքների կորստի հետ: Սկզբից ասեմ, որ հասարակությունը շատ հաճախ անբարոյականություն ասածն ընկալում է նեղ իմաստով, այն հաճախ նույնացվում է բարոյական ազատ վարքագծի հետ: Սակայն ճշմարտությունն այն է, որ անբարոյական ասածը շատ ավելի ընդգրկուն է, անբարո վարքը միշտ չէ, որ կապված է ինտիմ կյանքի հետ: Անբարոյական դրսևորումները կարելի է հաշվել հարյուրներով, գուցե հազարներով:Մարդը բնության մասնիկն է, կենդանիները՝ ևս: Սակայն, եթե մարդիկ ուղղորդվում են բնական բնազդով, ապա անպատասխան կմնա «Ո՞րն է մարդկանց և կենդանիների տարբերությունը» հարցադրումը: Այդ տարբերություն ասվածը հենց բանականությունն է ու բարոյական արժեքները, ինչը մեր օրերում կարծես երկրորդ, նույնիսկ երրորդ պլան է մղվել:

Բարոյական արժեքների ձևավորումը սկսվում է երեխայի ծնվելու հետ միաժամանակ և իրականացվում նրա ողջ կյանքի ընթացքում: Այդ գործընթացին մասնակցում են ընտանիքը, միջավայրը, եկեղեցին, տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաները և, իհարկե, երեխաների դաստիարկության հիմնական օղակը՝ հանրակրթական դպրոցը:

Բարոյական արժեքները էական են հասարակություններում ներդաշնակության և համակեցության մթնոլորտ ձեռք բերելու համար, այս իմաստով դրանք կարող են կարգավորվել հասարակության կողմից սոցիալական պատժամիջոցների միջոցով, մասնավոր կամ երկրի իրավական օրենսգրքում նախատեսված տույժերի կամ պատժամիջոցների միջոցով:

Բարոյական արժեքները էական են հասարակություններում ներդաշնակության և համակեցության մթնոլորտ ձեռք բերելու համար, այս իմաստով դրանք կարող են կարգավորվել հասարակության կողմից սոցիալական պատժամիջոցների միջոցով, մասնավոր կամ երկրի իրավական օրենսգրքում նախատեսված տույժերի կամ պատժամիջոցների միջոցով:

ԻՆՉՊԵՍ ԶԱՐԳԱՑՆԵԼ ԵՐԵԽԱՅԻ ՄԵՋ

Սովորեցրեք ճշտի ու սխալի վերաբերյալ հստակ չափանիշներ

- **Բարոյական հասկացություններ արտահայտող բառեր գործածեք:** Երեխայի հետ խոսեք առօրյա տարբեր իրավիճակների մասին և ցույց տվեք հակադրությունները՝ օգտագործելով բարոյական հասկացություններ արտահայտող բառեր, օրինակ՝ «սա ազնվություն է, իսկ սա՝ անազնվություն», «սա հավատարմության դրսևորում է, իսկ սա՝ անհավատարմության», «սա բարի վերաբերմունք է, սա՝ անբարյացակամ»: Ժամանակի ընթացքում երեխան կկարողանա հստակ տեսնել բարոյական հասկացությունների կապը կոնկրետ արարքների հետ:
- **Հիմնավորեք ձեր սովորեցրած չափանիշները:** Օրինակ՝ այսպիսի հարցեր տվեք՝ ինչո՞ւ է ազնիվ լինելը լավագույն տարբերակը, ստելը ինչո՞ւ կարող է վնասել փոխհարաբերությունները, ինչո՞ւ է գողանալը սխալ: Օգնեք, որ երեխան գործի դնի իր դատողությունն ու ձևավորվող խիղճը:
- **Բացատրեք, թե բարոյական չափանիշներին հետևելը ինչ օգուտներ է բերում:** Կարող եք ասել. «Եթե ազնիվ լինես, մարդիկ կվստահեն քեզ: Եթե բարի լինես, մարդիկ հաճույքով կշփվեն քեզ հետ»:

Բարոյական չափանիշներին հետևելը դարձրեք ձեր ընտանիքում ընդունված կարգ

Գործնական աշխատանք

Կազմել եմ հարցաթերթիկ ուսուցիչների շրջանում,ավելի հստակ չափանիշներ ներկայացնելու <<Բարոյական արժեքներ>> թեմայի բացահայտման համար և տարբեր տեսակետների ուսումնասիրության համար:



Վերոհիշյալ հարցին հարցման մասնակից Հայոց պատմության ուսուցիչները պատասխանել են հետևյալ կերպ. նրանց 18%-ը նշել է, որ իրենք կարևոր արժեք են հասկանում, այն ինչը կապված է բարոյական արժեքների հետ՝ ընկերասիրություն, ծնողասիրություն, հայրենասիրություն, այդ արժեքները իրենց համար կարևոր են: 30-ը նշել է, որ արժեք ասելով հասկանում են հայրենիք,ընտանիք,տուն, քանի որ ամուր ընտանիքից է սկսվում արժեքային համակարգ ունեցող քաղաքացու դաստիրակումը, 28%-ը նշել են, որ իրենց համար արժեք է այն ինչ կապվում է հարգանքի արժեքների հետ: Արժեքային կրթությունը ի սկզբանե կրթության անքակտելի բաղադրիչն է եղել:11%-ընշել է ճշտապահություն տարբերակը: Այսպիսով ինչպես ամբողջ աշխարհում, Հայաստանում էլ այսօր արժեքային կրթությունը հասարակությանը հուզող խնդիրներից մեկն է: <<Երեխան ծնվում է ընտանիքում, հետո դրվում մեր ձեռքերում, որ կոկենք: Նրա համար ո՞վ է աշխարհը ճանաչելու բանալին, ընտանիքում ծնողն է, մանկապարտեզում եւ դպրոցում՝ դաստիարակն ու ուսուցիչը: Երեխան ընտանիքում ծնողի արժեքների կրողն է, իսկ մանկապարտեզում և դպրոցում՝ դաստիարակի և ուսուցչի>>:

- ✓ .Ի՞նչ արժեքներ են այսօր անհրաժեշտ աշակերտներին:

Հարցման արդյունքում պարզ դարձավ, որ <<Հայոց պատմության>> դասագրքերում ներառված դասանյութերը նպաստում են սովորողների արժեքային համակարգի ձևավորմանը:Այսպիսով՝ ուսումնասիրելով պատախանները, կարող ենք հասկանալ, որ մեծ տեղ է տրված հայրենասիրական, աշխատանքային և բարոյական դաստիարակությանը, քիչ մաս չեն, բայց պետք է գիտակցեն և դաստիարակեն այնպիսի աշակերտներ, որոնք կունենան համամարդկային արժեքներ և կդաստաիրակվեն աշխարհաքաղաքացի:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կատարելով տեսական և հետազոտական ուսումնասիրություններ և վերլուծություններ, եկանք հետևյալ եզրահանգումներին.

- Հանրակրթական դպրոցում կրթադաստիարակչական գործընթացի կազմակերպման ընթացքում պետք է հաշվի առնել սովորողների տարիքային առանձնահատկությունները, անհատական պահանջմունքները՝ ձևավորելով հասարակության զարգացման համար անհրաժեշտ անձնային որակներ:
- Վիրտուալ տիրույթում ազատ հաղորդակցումը, սոցիալականացման և դաստիարակության ձևերի բազմազանությունը մեծ ազդեցություն սովորողների արժեքային համակարգի ձևավորման վրա. արժեհամակարգի ձևավորման թերությունները չափազանց դժվար է հաղթահարել հետագա տարիներին, իսկ բացթողումները կարող են պատճառ դառնալ անհատական զարգացման բացասական հետևանքների:
- սովորողների արժեկողմնորոշման գործում մեծ է. ազգային հպարտության ոգով, ստեղծագործական, մշակութային որակներով սոցիալականացված անհատի ձևավորման ու զարգացման համար, որի համար պետք է ներառվեն դաստիարակության հետևյալ բաղադրիչները.
- Բարոյական արժեքներ՝ ազնվություն, սեր իր և միջավայրի հանդեպ, հարգանք, հոգատարություն

- Նախատեսվում է ,որ դպրոցն ավարտող յուրաքանչյուր աշակերտ պետք է՝ լինի հայրենասեր և պատրաստ ծառայելու հայրենիքի պաշտպանության գործին,
- կարևորի ազգային-պետական մտածողության և գործելակերպ ունենալը
- Ունենա ազգային ինքնագիտակցություն
- Կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը,
- Ունենա արդարության , լավատեսության և պատասխանատվության զգացում, Գիտակցի ներկան և ապագան կերտելու խնդրում ազգային պատմության դերը, Գիտակցի իր ժողովրդի նյութական և հոգևոր արժեքները պահպանելու անհրաժեշտությունը։

Օգտագործվող գրականության ցանկ

- Իրավունք և բարոյականություն , «Իրավունք» օրաթաթերթ https://iravaban.net/1541.html
- Թորգոմյան Լ.Վ. Արժեքի գաղափարը և նրա զարգացումը Վերածննդի դարաշրջանի հայ մշակույթում, “Մանկավարժ” N3, 2010թ
- Թունյան Ջ.Ե., Լ.Մ.Երիցյան: Կրտսեր դպրոցականի հոգեբանություն: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Երևան, 2013թ
- Էլկոնին Դ.Բ.: Կրտսեր դպրոցականի ուսուցման հոգեբանություն, Երևան, «Լույս» հրատ., 1975, 68 էջ
- Бейлунцон, Б.Г., Зуев Д.Д. (1985). О функциональном подходе к оценке школьных учебников. Проблемы школьного учебника, вып. 5, Москва “Процвещение” .

URL: https://applied-research.ru/ru/article/view?id=8050

- .Л. П. Крившенко, Педагогика: Учебник, Изд-во Проспект, 2010. - 432 с https://studfile.net/preview/5183125/page:26/
- Սուխամլենսկի <<Ինչպես դաստիարակել իսկական մարդ>>